ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան 04.09.2024 թ.

Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիալոգիայի ֆակուլտետը ի դեմս դեկան՝ Ռուզաննա Պետրոսյանի մի կողմից և «ԻՆՏՕՖՖ» կրթամշակութային հասարակական կազմակերպություն ի դեմս տնօրեն՝ Եղիշե Դաշտոյանի, մյուս կողմից, կնքեցին համագործակցության մասին սույն Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն Հուշագրի առարկան Կողմերի միջև կրթական միջավայրի զարգացման, ուսումնական գործընթացներում, արտերկրի բուհական և այլ կրթական կառույցների հետ փորձի փոխանակման, կրթական այլ ուղղություններում, ինչպես նաև միջմշակութային շփման կազմակերպման ոլորտում համագործակցությունն է:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերը համագործակցում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ՀՊՄՀ ԿՀՍ ֆակուլտետի ուսանողների, պրոֆեսորադասախոսական, ուսմնաօժանդակ և վարչական կազմի ներկայացուցիչների ծանոթացում արտերկրների բուհերի և այլ կրթական կառույցների կրթական միջավայրերին, ծրագրերին, ուսումնական գործընթացի կազմակերպման և դասավանդման մեթոդիկայի, ինչպես նաև բուհական կյանքի կազմակերպման այլ առանձնահատկություններին, ինչպես նաև արտերկրի համանման ներկայացուցիչների ծանոթացում Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես ՀՊՄՀ-ում առկա նշյալ առանձնահատկություններին՝ փոխայցելությունների կազմակերպման միջոցով.
- Փոխայցելությունների կազմակերպման միջոցով ՀՊՄՀ ԿՀՍ ֆակուլտետի ուսանողների, պրոֆեսորադասախոսական, ուսմնաօժանդակ և վարչական կազմի ներկայացուցիչների ծանոթացում արտերկրների պատմամշակութային ժառանգությանը, հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ առկա են ճանաչված բուհեր, այլ կրթական կառույցներ, ինչպես նաև արտերկրի համանման ներկայացուցիչների ծանոթացում Հայաստանի Հանրապետության պատմամշակութային ժառանգությանը.
- Երկկողմ և բազմակողմ սեմինարների, խորհրդակցությունների, կլոր-սեղան քննարկումների, վերապատրաստումների, գիտաժողովների և այլ կրթական ու ճանաչողական բնույթի միջոցառումների, ինչպես նաև միջբուհական մշակութային միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2. 2. Վերը թվարկված ուղղությունների բովանդակությանը համահունչ այլ միջոցառումների կազմակերպում և իրականացում.

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3. 1. Սույն հուշագիրը Կողմերի համար չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ:

3. 2. Սույն հուշագրի շրջանակներում կազմակերպվող և իրականացվող յուրաքանչյուր միջոցառման անհրաժեշտ ֆինանսական ծախսերի շուրջ Կողմերը ձեռք են բերում առանձին պայմանավորվածություն, որը ձևակերպվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2. Կողմերի միջև վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. 3. Սույն Հուշագիրը կարող է չեղարկվել կողմերի համաձայնությամբ: Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագիրը չեղարկվում է նախապես մյուս կողմին 3 (երեք) ամիս առաջ տեղյակ պահելուց հետո:

4.4. Սույն Հուշագրի դրույթների չկատարման կամ ոչ բարեխիղճ կատարման դեպքում՝ դրա գործողությունը չի դադարում, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

4. 5. Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Հայաստանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ	**«ԻՆՏՕՖՖ» կրթամշակութային հասարակական կազմակերպություն**
ք. Երևան, Տիգրան Մեծ 17	**Ք. Երևան, Մ. Չայլախյան 41/1**
Հեռ.՝ (+374) 10 59-70-40	**Հեռ.՝ (+374) 93-14-55-19**
Դեկան՝ Ռուզաննա Պետրոսյան	Տնօրեն՝ Եղիշե Դաշտոյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.